

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 21.10.2020թ. թիվ 2011780654 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<25>> 11 2020թ. 7-13- 14841

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Գալուստ Սաղաթեյանի ՄԴ/147982-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի Դավիթաշեն վարչական շրջանի Դավիթաշեն 4 թաղամասի 4Ա շենքի 17 բնակարանի բնակիչ Գալուստ Սաղաթեյանը դիմումով խնդրել է վերանայել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011780654 որոշումը՝ նշելով, որ հետիոտին զիջելու նպատակով է կանգառ կատարել, իսկ ուղևորն այդ պահին իջել է ավտոմոբիլից առանց զգուշացնելու:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկը չի կարող վարչական ակտը բեկանելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

<< կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 84-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ **կանգառն արգելվում է հետիոտնային անցումների վրա** և շարժման ուղղությամբ հետիոտնային անցումից առաջ՝ 5 մետր մոտ վայրում:

Վիճարկվող որոշման հիմքում դրված տեսանյութը փաստում է, որ դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցը 06.10.2020թ. ժամը 08:12-ին Երևան քաղաքի Սարյան-Կ.Դեմիրճյան փողոցների խաչմերուկի հատվածում իրավախախտումը կատարած վայրում կանգառ է կատարել հետիոտնային անցման վրա՝ թույլ տալով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 124-րդ հոդվածի 26-րդ մասով նախատեսված արարք:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 124-րդ հոդվածի 26-րդ մասով նախատեսված արարք կատարելու համար նախատեսված չէ արարքի նվազ նշանակություն ունենալու որևէ պայման (կանգառի փրկողություն, ուղևոր նստեցնել կամ իջեցնելու նպատակով կանգառ կատարելու և այլն):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (**դիտավորյալ կամ անզգույշ**) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Այսպիսով, հիմնավորվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011780654 որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

- 1.Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 21.10.2020թ. թիվ 2011780654 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
- 2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
- 3.Սույն որոշման օրինակն ուղարկել Գալուստ Սաղաթեյանին:



Ե.Կարապետյան